Ունիոնիստ Արչեսին հարց է տալիս, մշտական տատանման չի՞ ենթարկել արդեօք վերջին ժամանակներս Տիբէթի արտաքին յարաբերութիւնները։ Եթէ այս, կարող է Դրէյը դիմել Ռուսաստանին հրաժարուել Լխասսի բրիտանական գործակալ չթոյլատրելու պայմանից։ Դրէյը պատասխանեց, որ ցանկալի չի համարում դիմել Ռուսաստանին Տիբէթի վերաբերմամբ անգլօ-ռուսական համաձայնութիւնը փոփոխել և յոյս է յայտնում, պահպանել status quo-ն գոյութիւն ունեցող համաձայնութիւնների դէպքում ևս։

—

Պէկին.—Իւանշիկայի ձեռքի տակ գտնուած մայրաքաղաքի զօրքի և ոստիկանութեան ճնշման տակ, ազգային ժողովը հաստատեց մինիստրական պաշտօնների համար նախագահի առաջարկած հինգ թեկնածուներին, քուէարկութեան ենթարկելով թեկնածուներից մէկին, առևտրի մինիստրի պաշտօնի համար։

— Հաղորդելով Խոտանում տեղի ունեցած ռուսահպատակ մուսուլմանների ծեծելու մասին, կիսապաշտօնական թերթերը բացատրում են դէպքի առիթ լինելը, մեղադրելով իրենց ռուսահպատակներին, որոնցից Սաիդ-Էֆենդին, իբր առանց որևէ պատճառի սպանել է երեք չինացիների և վիրաւորել շատերին։

Միաժամանակ յայտնում են, որ զոհուածների թիւը ռուսները խիստ մեծացրել են, մտցնելով զոհերի թւում նաև սպանուած չինացիներին, որի համար և պահանջում են Խոտանի դէպքերի կրկնակի քննութիւն։

ՄԱՄՈՒԼ

Նկատուած երևոյթ է, որ երբ քաղաքից բացակայում է Քալանթարը, Հ. Առաքելեանի համար այդ օրերը տօն են լինում. սկսում է շահագործել „Մշակը" ըստ իր ցանկութեան. հրապարակում դրուած խնդիրները ծռում է սովորականից էլ աւելի, հասարակական կարևոր հարցերը խեղաթիւրում է. իր մասին եղած շողոքորթիչ յօդուածներին տեղ է տալիս... մի խօսքով շահատակութեան վայր է դարձնում „Մշակի" էջերը այդ օրերին։

Ներկայումս էլ մի քանի օր է ինչ Քալանթարը հեռացել է քաղաքից և նորից Հ. Ա. շահագործում է „Մշակը". նա առիթ չէ բաց թողնում թէ „առաջնորդող" յօդուածներում և թէ ներքին տեսութեան մէջ „իր սովորական" միջոցներին դիմել. „գերագոյն դաւաճան", „ազգակործան", „ոճրագործ", „վայրենի", „բիրտ"... և նման անվերջ որակումներ իր հակառակորդներին։

„Մշակի" № 151-ում տպուած „Անկորեկտ վարմունք և նոր խարդախութիւններ" վերնագիրը կրող յօդուածով Հ. Ա. գալիս է նորից և նորից ցուցադրելու իր դէմքը՝ որպէս „շիտակ" և „օբեկտիւ" «հրապարակախօսի»։

Մանրամասն բացատրութիւնների մէջ մտնել այդ առթիւ՝ դա ապարդիւն աշխատանք կը լինի մեր կողմից և որ գլխաւորն է, տաղտկալի ընթերցող հասարակութեան համար, որ արդէն ձանձրացել է թերթերում տեսնել Հ. Ա. անուն հոլովելիս։

Մեր ցանկութիւնը ներկայումս միայն „մի մոլորուածի" ուղիղ ճանապարհի կանգնեցնելն է, որը դեռ ևս երէկ «С. П. Вѣд.»-ի թերթում գիտակցաբար թէ անգիտակցաբար մոլորեցնում էր ռուս հասարակութիւնը՝ համարելով Հ. Ա.-ին „շիտակ" „օբեկտիւ հրապարակախօս"։

Միայն մի երկու փաստ մէջտեղ կը հանենք՝ ցոյց տալու պ. Ալլահվերդեանին՝ ճիշտ իր կարծածի հակառակը։

> „Անցեալ տարի, ձմեռը, երբ հրապարակի վրայ դրուեց „Մշակի" 40-ամեայ յոբելեանը տօնելու հարցը, „Հորիզոնը" իր ղեկավար Լէօի հետ, կամենալով խափանել այդ յոբելեանը, մէջ տեղ նետեց տպագրութեան 400-ամեակը տօնելու հարցը... („Մշակ" № 151)։

Հայ տպագրութեան 400-ամեակը տօնելու հարցը հարուցել է „Հորիզոնի" № 118-ում «Համազգային յոբելեան» տիտղոսով առաջնորդողում պ. Լէօն, ոչ թէ „անցեալ տարի ձմեռը" ինչպէս գրում է Հ. Ա., այլ անցեալ տարի ամառը՝ յունիսի ճիշտ 3-ին։

Այսինքն դեռ ևս այն ժամանակ, երբ „Մշակի" խմբագիրներն իրենք անգամ չէին մտածել տօնելու „Մշակի" յոբելեանը։

> «Հայկական տպագրութեան 400-ամեակ տօնելու միտքը արտասահմանեան մամուլի մէջ աւելի վաղ արծարծուեց, քան մեր մէջ, և Թուրքահայ գրականագէտներից մինը՝ Ա. Ալպօյաճեան մի քանի բանասիրականներ նուիրեց հայկական տպագրութեան 400-ամեայ պատմութեան, որոնք տպագրուեցին Ամերիկայի «Կոչնակ» հանդէսի մէջ։

Թիւրքահայերն իրանք կամաչեն Հ. Ա.-ի տեղ այդտեսակ մեծ սուտի համար, գիտակցելով, որ „Հորիզոնից" յետոյ էր, որ նրանք արձագանգ տուին տպագրութեան 400-ամեակի տօնելուն։

> „Գրական ֆոնդի առաջարկի առաջին հեղինակը եղել եմ ես ինքս Կ. Հ. Բ. Ընկ. ժողովում"..

Գրական ֆոնդի խնդիրը արծարծել է Յով. Թումանեանը „Հորիզոնի" մէջ յունիսի 4-ին, այսինքն այն ժամանակ, երբ դեռ ևս Կ. Հ. Բ. Ընկ. ընդհանուր ժողովը չէր վերջացել և Յ. Թ. իր յօդուածի մէջ էլ ասում է թէ՝ նորից մենք գալիս ենք պնդելու բազմիցս կրկնուած գրական ֆոնդի անհրաժեշտութիւնը. իսկ այսօր Հ. Ա. ինքն իրեն յայտարարում „գրական ֆոնդի առաջարկի առաջին հեղինակ"...

Սակայն հետաքրքիրը Հ. Ա.-ի ռևերանսն է պրովոկացիայի հագուստով.

> „... Անգուսպ փառասիրութեան յագուրդ տալու համար Լէօն կանգ չէ առնում նոյն իսկ կաթողիկոսին մեղադրել անբացատրելի անուշադիր վերաբերմունքի, անտրամաբան վարմունքի... մէջ"։

Այս բոլորից յետոյ Հ. Ա. կարող մխիթարուել ասելով.

— Omnis homo mendax!..